

Արագ ուղի ԱՄՆ-ում իրավագիտության մագիստրոսի աստիճան ձեռք բերելու համար

**Առանց աշխատանքից հրաժարվելու իրավագիտության նախամագիստրոսական
ծրագրով ուսանելու առավելություն**

Իրավագիտության նախամագիստրոսական և մագիստրոսական ուսման ծրագրեր

Կրթաթոշակի էական հնարավորությամբ

2013-2014 ուսումնական տարվա համար

Չիկագո-Քենթ իրավագիտության քոլեջը, համագործակցելով Վրաստանի Գիտելիքների Կառավարման Խմբի հետ, հայտարարում է երկու փոխկապակցված ծրագրերի մասին.

- ✓ Իրավագիտության նախամագիստրոսական ծրագիրը, որն անց է կացվում Վրաստանում, Թբիլիսիում /երկու կիսամյակ, ծրագրի ավարտին տրվում է հավաստագիր/
- ✓ Իրավագիտության մագիստրոսական ծրագիրը, որն անց է կացվում ԱՄՆ-ի Իլլինոյս նահանգի Չիկագո քաղաքում, /մեկ կիսամյակ, ծրագրի ավարտին տրվում է մագիստրոսի աստիճան/

Ծրագրերը գործում են ողջ կովկասյան տարածաշրջանի /Հայաստան, Ադրբեջան, Վրաստան/ և Թուրքիայի համար:

Չիկագո-Քենթ իրավագիտության քոլեջը Վրաստանում մեկնարկել է իր արտասահմանյան իրավագիտության նախամագիստրոսական և իրավագիտության մագիստրոսական ծրագրերը 2012թ-ի սեպտեմբերին: Առաջին՝ 2012-2013 ուսումնական տարում, իրավագիտության նախամագիստրոսական ծրագրում ներգրավվել են տասներեք թեկնածուներ /տասը՝ Վրաստանից, երկուսը՝ Հայաստանից, մեկը՝ Ադրբեջանից/: Տաս ուսանողներ արդեն ընդունվել են Չիկագո-Քենթ իրավագիտության քոլեջ՝ շարունակելու ուսումը ԱՄՆ-ի իրավագիտության մագիստրոսական ծրագրով՝ “Միջազգային և Համեմատական Իրավունքի” դիպլոմ ստանալու համար՝ մասնակի և երեք ամբողջական կրթաթոշակներով:

2013-2014 ուսումնական տարվա համար Չիկագո-Քենթի իրավագիտության նախամագիստրոսական ծրագիրն առաջարկում է երկու կիսամյակով դասընթացներ, որոնք կդասավանդվեն բացառապես Չիկագո-Քենթ իրավագիտության քոլեջի հիմնական կամ հրավիրված դասախոսների կողմից:

Իրավագիտության նախամագիստրոսական ծրագիրն առաջարկում է երկու կիսամյակ, նվազագույնը 120 կրեդիտային ժամ ինտենսիվ դասախոսություններով 10 դասընթացներ: Իրավագիտության նախամագիստրոսական ծրագրի ուսուցման ընթացքն ընդգրկում է 2013-2014 ուսումնական տարվա սեպտեմբերից մայիս ամիսները:

Ուսուցման ձևն է՝ մեկ կամ առավելագույնը երկու դասընթաց մեկ ամսում՝ հանգստյան օրերին անցկացվող սեմինարների տեսքով:

2013-2014 ուսումնական տարվա դասընթացներն են.

Առաջին կիսամյակ 2013թ.

1. Սեպտեմբեր՝ Ամերիկայի իրավական համակարգի ներածություն, դասախոս՝ Իգոր Մոլոդովնիկ
2. Սեպտեմբեր՝ Առևտրային կազմակերպություններ, դասախոս՝ Ագնիեշկա Ցենգարտովիչ
3. Հոկտեմբեր՝ Միջազգային առևտրային գործարքներ, դասախոս՝ Թոմաս Հիլ
4. Նոյեմբեր՝ Առևտրային իրավունք, դասախոս՝ Սթիվ Հարրիս
5. Դեկտեմբեր՝ Պայմանագրերի առցանց կնքում, դասախոս՝ Ռիչարդ Վարներ

Երկրորդ կիսամյակ 2014թ.

6. Հունվար՝ Հակամենաշնորհային իրավունք, դասախոս՝ Ագնիեշկա Ցենգարտովիչ
7. Փետրվար՝ Գովազդային և մարքեթինգային համեմատական իրավունք, դասախոս՝ Իգոր Մոլոդովնիկ
8. Մարտ՝ Անձնական կյանքի անձեռնմխելիության և անհատական տվյալների պաշտպանության իրավունք, դասախոս՝ Միքայ Միլոշ
9. Ապրիլ՝ Արտոնագրային իրավունք, դասախոս՝ Մորին Նեյբերգ
10. Մայիս՝ ՄՍ Իրավունք, Էլեկտրոնային առևտուր և համակարգչային հանցագործություններ, դասախոս՝ Ռիչարդ Վարներ

Ամերիկյան իրավունքի դպրոցի ուսուցումն իրականացվում է անգլերեն լեզվով: Հետևաբար, բոլոր դիմումները պետք է գրված լինեն գրագետ անգլերենով: Այնուամենայնիվ, ծրագիրը սկսելու համար դիմումատուներին չի պարտադրվում ներկայացնել TOEFL կամ LSAT արդյունքներ:

ԱԻԴ իրավագիտության նախամագիստրոսական ծրագիրին մասնակցող ուսանողները կգնահատվեն բացառապես Չիկագո-Քենթ իրավագիտության քոլեջի դասախոսների կողմից՝ 4.0 բալանոց համակարգով և նրանցից կպահանջվի հավաքել նվազագույնը 2.7 միջին միավոր՝ Չիկագո-Քենթի իրավագիտության մագիստրոսական ծրագրում ընդգրկվելու համար:

ԱԻԴ իրավագիտության նախամագիստրոսական ծրագրի համար կարող են դիմել.

- ✓ Գործող իրավաբանները կամ նրանք, ովքեր ներպետական օրենսդրության համաձայն լիազորված են զբաղվել իրավագիտությամբ;
- ✓ Իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ստացած անձինք;
- ✓ Իրավագիտության բակալավրիատի երրորդ կուրսում սովորողները;

- ✓ Այլ մասնագիտությամբ բակալավրի աստիճան ստացած, սակայն իրավագիտության մագիստրոսի աստիճան և փաստաբանի արտոնագիր ունեցող անձինք:

Բոլոր ուսանողները իրավունք ունեն մասնակցել փոխանակման ծրագրին /մինչև մեկ կիսամյակ տևողությամբ/ Լեհաստանի Ամերիկյան իրավունքի դպրոցում:

Այն ուսանողները, ովքեր կացնեն իրավագիտության նախամագիստրոսական ծրագրի բոլոր պարտադիր դասընթացները, կըղգրկվեն Չիկագո-Քենթ Իրավագիտության Դպրոցի իրավագիտության մագիստրոսական ծրագրում ամբողջական կամ մասնակի կրթաթոշակներով՝ Չիկագո-Քենթի իրավագիտության մագիստրոսի աստիճան մեկ կիսամյակով ստանալու համար:

Բոլոր դիմումատուները պետք է ներկայացնեն.

1. Դիմում;
2. Անգլերենով ինքնակենսագրություն;
3. Անձնագրի կամ ինքնությունը հաստատող փաստաթղթի պատճենը;
4. Դիպլոմի պատճեն, իսկ իրավագիտության բակալավրիատում սովորողների համար՝ ԲՈՒՀ-ից տեղեկանք;
5. Ուղեկցող գրություն;
6. Երկու երաշխավորող գրություն: Երաշխավորող գրությունները պետք է լինեն բլանկի վրա՝ կոնտակտային տվյալներով և պետք է տրված լինեն դիմումատուի աշխատանքին ծանոթ անձի կողմից: Այդ անձը կարող է լինել ղեկավար, աշխատակից կամ որևէ անձ, ում վրա դիմումատուի աշխատանքն այս կամ այն կերպ ազդել է:

Դիմումների հանձման վերջնաժամկետը 2013 թվականի հուլիսի 15-ն է:

Չիկագո-Քենթ Իրավագիտության քոլեջի որոշումը կձևանուցվի 2013 թվականի օգոստոսի 15-ին և ընտրված թեկնածուները կձանուցվեն էլեկտրոնային փոստի միջոցով ոչ ուշ քան 2013 թվականի սեպտեմբերի 15-ին:

Չիկագո-Քենթի Իրավագիտության նախամագիստրոսական ծրագիրը տեղի կունենա Վրաստանում՝ Թբիլիսիում, իսկ մագիստրոսական ծրագիրը՝ ԱՄՆ-ի Իլլինոյս նահանգի Չիկագո քաղաքում:

Դիմումները ներկայացնելու գործընթացի, կրթաթոշակների և ուսման վարձի, ինչպես նաև ուսումնառության գործընթացի վերաբերյալ Վրաստանի Գիտելիքների Կառավարման Խումբը (Knowledge Management Group) շահագրգիռ անձանց համար տրամադրում է խորհրդակցություն և անց է կացնում դասընթացներ 2013 թվականի հունիսի 1-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Կրթաթոշակներ և ուսման վարձ

Իրավագիտության նախամագիստրոսական ծրագրի 2013-2014 թվականների համար վարձը կազմում է 5500 ԱՄՆ դոլլար (հինգ հազար հինգ հարյուր), որը պետք է վճարվի երկու փոխանցումներով:

ԳԿԽ-ն (Knowledge Management Group)՝ որպես կառավարող կազմակերպություն, կտրամադրի 1000 ԱՄՆ դոլլարի չափով կրթաթոշակ Հայաստանի, Թուրքիայի, և Ադրբեջանի մասնակիցներին՝ Թբիլիսիում իրավագիտության նախամագիստրոսական ծրագրով ուսանելու ընթացքում նրանց աջակցելու համար: Հետևաբար նշված երկրների մասնակիցների համար Թբիլիսիում իրավագիտության նախամագիստրոսական ծրագրով ուսանելու վարձը կազմելու է 4500 ԱՄՆ դոլլար:

Բոլոր այն մասնակիցները, ովքեր կավարտեն իրավագիտության նախամագիստրոսական ծրագիրը և կստանան ավարտական հավաստագրեր կստանան մասնակի կրթաթոշակ Չիկագո-Քենթ իրավագիտության քոլեջից՝ իրավագիտության մագիստրոսական ծրագրով ուսանելու համար: Այդ կրթաթոշակը միայն հոգում է Չիկագո-Քենթ իրավագիտության քոլեջի ուսման վարձը: Հետևաբար Ամերիկյան իրավունքի դպրոցի իրավագիտության նախամագիստրոսական ծրագիրն ավարտողները իրավագիտության մագիստրոսական ծրագրով ուսանելու համար կվճարեն միայն 10 000 ԱՄՆ դոլլար 44 000 ԱՄՆ դոլլարի փոխարեն:

Ծրագրերի, ուսման պլանի, իրավագիտության նախամագիստրոսական կամ մագիստրոսական ծրագրերին մասնակցելու առավելությունների, կրթաթոշակների և ուսման վարձի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կից ներկայացվում է մեր բրոշյուրը և դիմումի ձևը:

Լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ հետևյալ կայքերում.

1. www.kmg.ge
2. <http://www.kentlaw.iit.edu/academics/llm-programs/international-and-comparative-law/special-llm-and-overseas-training-programs>

Պահաջնվող փաստաթղթերը ներկայացնելու էլեկրոնային հասցեն է info@chicagokentlaw.ge-ն:

Հարցեր ունենալու դեպքում կարող եք առանց հապաղելու գրել ծրագրի էլեկտրոնային հասցեով՝ info@chicagokentlaw.ge

Կարելի է նաև զանգահարել (+995) 577974001 (+995) 577774030 հեռախոսահամարներով: